



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
Մ Ա Ր Դ ՈՒ Ի Ր Ա Վ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն**

0002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 02 62, ֆաքս 53 88 42  
ombuds@ombuds.am, www.pashtpan.am

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2016թ.

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՏԻԿԻՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Հովհաննիսյան,

Ձեր՝ սույն թվականի մարտի 11-ի թիվ 01/19.1/2633-16 գրությանն ի պատասխան՝ Ձեզ է ներկայացվում ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին թիվ 1543-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները և դիտողությունները:

Ողջունելի է, որ Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում առաջարկվում է կատարել այնպիսի լրացումներ, որոնց արդյունքում օտարերկրյա քաղաքացի կալանավորված անձանց և դատապարտյալներին հնարավորություն կընձեռնվի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովել կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը, մասնավորապես, հիմնավորվում է այն հանգամանքով, որ օտարերկրյա քաղաքացի կալանավորված անձինք և դատապարտյալները՝ մերձավոր ազգականների արտերկրում գտնվելու և արտերկրի հետ հեռախոսակապի թանկ սակագների պատճառով, որպես կանոն, չեն կարողականում օգտվել տեսակցություններից և հեռախոսազանգերից:

Համամիտ լինելով Նախագծի հեղինակների նպատակադրմանը՝ միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ չնայած դրա առաջադեմ մոտեցմանը՝ գտնում ենք, որ Նախագծում տրված որոշակի ձևակերպումներ խնդրահարույց են: Այսպես.

1. Կարծում ենք՝ Նախագծի կարգավորումների կարևորությունն ու արդիականությունը պետք է պայմանավորել նաև Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունված «Ազատությունից զրկված օտարերկրացի անձանց մասին» CM/Rec (2012) 12 հանձնարարականով: Նշված փաստաթուղթը կարևորելով ազատությունից զրկված օտարերկրացի անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանման կարևորությունը՝ սահմանում է, որ հեռախոսազանգից և **կապի այլ միջոցներից** օգտվելու կանոնները պետք է ճկուն կերպով կիրառվեն, որպեսզի արտերկրում

գտնվող անձանց հետ շփվող ազատությունից զրկված օտարերկրացի անձինք ազատությունից զրկված այլ անձանց նման ունենան հավասար հնարավորություններ օգտվելու նույնպիսի կապի միջոցներից (22.3 կետ):

Նշված փաստաթղթի մեկնաբանություններում, մասնավորապես, նշվում է, որ հեռախոսակապի տրամադրման կարգը պետք է հնարավորինս ճկուն լինի և այցելությունների միավորման հետ մեկտեղ կբարելավի արտաքին աշխարհի հետ կապը: Միաժամանակ շեշտվում է, որ այնպիսի իրավիճակներում, երբ ճանապարհաձախսի թանկ արժեքը խոչընդոտ է հերթական այցելություն կատարելու համար (եթե այդպիսիք ընդհանրապես լինում են), ապա արտաքին աշխարհի հետ կապը կարող է հեշտացվել կամ բարելավվել՝ օգտագործելով տեխնոլոգիաներ, ինչպիսին է տեսակապը<sup>1</sup>:

Թեև Նախագիծն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապի ապահովման համար լրացուցիչ պայմաններ է ընձեռնում միայն օտարերկրյա քաղաքացի կալանավորված անձանց և դատապարտյալների համար, այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները քրեակատարողական հիմնարկներում իրականացվող մշտադիտարկումների ընթացքում արձանագրել են նաև դեպքեր, երբ սոցիալապես անապահով ՀՀ քաղաքացի կալանավորված անձինք և դատապարտյալները տևական ժամանակ հնարավորություն չեն ունեցել կապ հաստատել մերձավոր ազգականների հետ: Մեր կարծիքով այդպիսի հնարավորություն պետք է ընձեռնվի բոլոր կալանավորված անձանց և դատապարտյալների համար՝ անկախ քաղաքացիությունից կամ դրա բացակայությունից:

Այսպիսի մոտեցումը համահունչ կլինի նաև օրենքի առջև կալանավորված անձանց և դատապարտյալների հավասարության սկզբունքին, որն ամրագրված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 8-րդ հոդվածում:

Բացի այդ, կալանավորված անձանց և դատապարտյալների ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու կարևորությունն ընդգծվել է նաև «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 2-րդ մասի 24.1-րդ կետում, որի համաձայն՝ **ազատությունից զրկված անձանց** պետք է թույլատրվի հնարավորինս հաճախ հաղորդակցվել նամակների, հեռախոսակապի կամ **այլ հաղորդակցման միջոցներով** իրենց ընտանիքների, այլ անձանց և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և տեսակցություն ունենալ նրանց հետ:

Նշված միջազգային փաստաթղթի մեկնաբանությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ազատագրվումը չպետք է նշանակի արտաքին աշխարհի հետ կապերի դադարեցում: Ընդհակառակը, **ազատությունից զրկված բոլոր անձինք** իրավունք ունեն արտաքին աշխարհի հետ կապի պահպանման, և ազատագրված վայրերի ղեկավարությունը պետք է ձգտի, որ ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք հնարավորինս կնպաստեն արտաքին աշխարհի հետ կապի պահպանմանը: Սովորաբար այդպիսի կապերը պահպանվում են հեռախոսազանգերի, տեսակցությունների (այցելությունների) միջոցով, սակայն ազատագրված վայրերի ղեկավարությունը պետք է գիտակցի նաև այն մասին, որ ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել, այդ թվում

<sup>1</sup>Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունված «Ազատությունից զրկված օտարերկրացի անձանց մասին» CM/Rec (2012) 12 հանձնարարականի մեկնաբանությունները: Հասանելի է հետևյալ կայքէջում՝ [http://www.coe.int/t/dghl/standardsetting/prisons/Rec\(2012\)12Commentary\\_E.pdf](http://www.coe.int/t/dghl/standardsetting/prisons/Rec(2012)12Commentary_E.pdf) (25.04.2016 թվականի դրությամբ):

նաև՝ էլեկտրոնային տեխնոլոգիաների օգտագործմամբ: Ձարգացմանը զուգահեռ առաջանում են այդպիսի տեխնոլոգիաների նկատմամբ հսկողության նոր հնարավորություններ, ինչը թույլ է տալիս, ազատագրված վայրերի անվտանգությունն ապահովելով, օգտագործել դրանք: Արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը կենսական նշանակություն ունի ազատագրված պոստենցիալ բացասական հետևանքների դեմ պայքարում<sup>2</sup>:

Խոշտանգումների կանխարգելման միությունն իր հերթին նշել է, որ կալանավորված անձանց և դատապարտյալների՝ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու նպատակով ազատագրված վայրերը պետք է բաց լինեն նոր տեխնոլոգիաների համար, ինչպիսին է օրինակ՝ «Skype»-ը<sup>3</sup>:

Ի դեպ, արտասահմանյան երկրների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ երկրների քրեակատարողական օրենսդրությունը տեսազանգի հնարավորության տրամադրումը որևէ կերպ չի պայմանավորում կալանավորված անձանց և դատապարտյալների օտարերկրյա քաղաքացի լինելու հանգամանքով (տե՛ս Լեհաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 105-րդ<sup>4</sup> և Վրաստանի Հանրապետության ազատագրված մասին օրենսգրքի 17<sup>1</sup>-րդ հոդվածներ<sup>5</sup>):

2. Խնդրահարույց է նաև Նախագծում տեղ գտած «համապատասխան տեխնիկական միջոցների առկայության դեպքում» ձևակերպումը, որով, փաստորեն, կալանավորված անձանց և դատապարտյալների արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքը կախվածության մեջ է դրվում տեխնիկական համապատասխան միջոցների առկայությունից: Մինչդեռ, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջների վերլուծությունը ցույց է տալիս, որ կալանավորվածներին պահելու վայրի և ուղղիչ հիմնարկի վարչակազմերը կալանավորված անձանց և դատապարտյալների կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ապահովելու համար **ստեղծում են համապատասխան պայմաններ**: Այդ նպատակով այլ պայմանների հետ մեկտեղ (...) **ստեղծվում են նաև կապի հնարավոր միջոցների հանգույցներ**:

Նման մոտեցում առկա է նաև Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի վերաբերյալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից 1992 թվականի ապրիլի 10-ին տրված թիվ 21 ընդհանուր մեկնաբանությունում, որի համաձայն՝ բոլոր ազատությունից զրկված անձանց մարդկայնորեն և նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքով վերաբերվելը հիմնարար և համընդհանուր կիրառություն ունեցող կանոն է: **Հերևաբար, այս կանոնի կիրառումն**

---

<sup>2</sup>Տե՛ս Commentary to recommendation REC(2006) 2 of the Committee of Ministers to member states on the European Prison Rules, էջ 10: Հասանելի է հետևյալ կայքէջում՝ <http://www.coe.int/t/dghl/standardsetting/prisons/E%20commentary%20to%20the%20EPR.pdf> (25.04.2016 թվականի դրությամբ):

<sup>3</sup>Association for the Prevention of Torture, Detention Focus (Correspondence/Phone/Internet), էջ 2: Հասանելի է հետևյալ կայքէջում՝ [http://www.apt.ch/detention-focus/en/detention\\_issues/39/](http://www.apt.ch/detention-focus/en/detention_issues/39/) (25.04.2016 թվականի դրությամբ):

<sup>4</sup>Հասանելի է Լեհաստանի Հանրապետության Սեյմի պաշտոնական կայքէջում՝ <http://isap.sejm.gov.pl/DetailsServlet?id=WDU19970900557> (25.04.2016 թվականի դրությամբ):

<sup>5</sup>Հասանելի է Վրաստանի պատիժների և պրոբացիայի նախարարության պաշտոնական կայքէջում՝ [http://www.moc.gov.ge/pdf/law/text\\_14182882142.pdf](http://www.moc.gov.ge/pdf/law/text_14182882142.pdf) (25.04.2016 թվականի դրությամբ):

**առնվազն չի կարող կախված լինել մասնակից պետության տարածքում առկա նյութական ռեսուրսներից<sup>6</sup>:**

3. Ըստ Նախագծի՝ տեսազանգից օգտվելու գործընթացը կարող է կազմակերպվել միայն Սկայփ (Skype) համակարգչային ծրագրի միջոցով: Մինչդեռ, ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում կապ հաստատել ոչ միայն նշված, այլ նաև ուրիշ համակարգչային ծրագրերի միջոցով: Այնուամենայնիվ, տվյալ պարագայում, մեր կարծիքով, կարևոր է ոչ թե այս կամ այն համակարգչային ծրագրի մատնանշումը, այլ այն, թե տեսազանգից օգտվելու գործընթացը կազմակերպելու համար տեխնիկական ինչպիսի նվազագույն գործառույթներով պետք է օժտված լինի տվյալ ծրագիրը: Կարծում ենք, որ Նախագծով պետք է սահմանել նաև կապի տեխնիկական այնպիսի նվազագույն անհրաժեշտ հնարավորությունները, ինչպիսիք են օրինակ՝ հեռաձայնելը, ակնթարթային հաղորդագրություններ գրելը, տեսազանգելը և այլն: Պատահական չէ, որ արտասահմանյան երկրների օրենսդրությունը չի մատնանշում տեսազանգի կազմակերպման համար կոնկրետ համակարգչային ծրագրեր:

4. Խնդրահարույց է նաև Նախագծում օգտագործված դրույթն այն մասին, որ տեսազանգի ընթացքում կարող է ներկա գտնվել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը: Նշված իրավիճակը, մեր կարծիքով, համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածում ամրագրված դրույթին, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և **հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք**: Ի դեպ, ասվածը վերաբերում է նաև ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 180-րդ կետի 2-րդ պարբերությանը, ըստ որի՝ հեռախոսագրույցը կարող է տեղի ունենալ վարչակազմի ներկայացուցչի ներկայությամբ:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը պատասխանում է նաև այն հարցին, թե ազատությունից զրկված անձի և նրա մերձավոր ազգականների հետ շփման ընթացքում կարող է արդյոք ներկա գտնվել ազատագրված վայրի վարչակազմի ներկայացուցիչը: Դատարանը գտել է, որ ընտանեկան այցելությունները չպետք է սահմանափակվեն ոչ ճկուն կերպով և պետությունները պետք է մշակեն մեխանիզմներ, որոնք թույլ կտան իշխանություններին համադրել իրար հետ մրցակցող անհատի ու հանրության շահերը և հաշվի առնել յուրաքանչյուր առանձին դեպքի առանձնահատկությունները: Դիմումատուն միաժամանակ կարող էր տեսնել իր ընտանիքի միայն երեք անդամներին՝ սահմանափակ ժամանակահատվածում և ապակե միջնապատի ետևից, որը բացառում էր որևէ ֆիզիկական շփում: Բացի այդ, **ազատագրված վայրի աշխատակցի ներկայությունը թույլ չէր տալիս դիմումատուին առանձին և մտերմիկ շփում ունենալ իր ընտանիքի անդամների հետ**: Ամփոփելով՝ դատարանն ընդգծել է, որ պետությունը չէր ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք երաշխավորում էին, որպեսզի դիմումատուի անձնական շահերն իր ընտանիքի հետ հանդիպումների ընթացքում պատշաճ կերպով հավասարակշռության մեջ

<sup>6</sup>Տե՛ս Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (գործեր, նյութեր և մեկնաբանություններ): Երկրորդ հրատ., Եր., 2009թ., էջ 250:

լինեն համապատասխան հասարակական շահերի հետ՝ արտաքին աշխարհի հետ ազատությունից զրկված անձանց շփումը սահմանափակելու համար (տե՛ս Տրոսինն ընդդեմ Ուկրաինայի գործով վճիռ, 2012թ. փետրվարի 23, գանգատ թիվ 39758/05, կետեր 45-47):

Ազատությունից զրկված անձանց հաղորդակցության ու տեսակցության սահմանափակման դեպքերի մասին նշված է նաև «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 2-րդ մասի 24.2-րդ կետում, ըստ որի՝ հաղորդակցությունն ու տեսակցությունները կարող են սահմանափակվել կամ վերահսկվել քրեական վարույթի պահանջներից ելնելով, կարգուկանոն, անվտանգություն ապահովելու, հանցագործությունը կանխելու կամ հանցագործությունից տուժած անձանց պաշտպանելու համար:

Նշված սահմանափակման վերաբերյալ անդրադարձ է կատարվել նաև հիշյալ հանձնարարականի մեկնաբանություններում, որի համաձայն՝ կանոնները, որոնց հիման վրա սահմանափակվում է արտաքին աշխարհի հետ կապը, պետք է **հստակ ձևակերպված լինեն և համապատասխանեն գործող օրենսդրությանը**, ինչպես դա պահանջում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասը՝ չթողնելով անազատության մեջ գտնվող անձանց պահելու վայրերի վարչակազմի հայեցողությանը (տե՛ս Լաբիտան ընդդեմ Իտալիայի գործով վճիռ, 2000թ. ապրիլի 6, գանգատ թիվ 26772/95, կետեր 175-185)<sup>7</sup>:

Այս կապակցությամբ հատկանշական է Վրաստանի Հանրապետության ազատագրկման մասին օրենսգրքի 17<sup>1</sup>-րդ հոդվածի 6-րդ մասի այն կարգավորումը, ըստ որի՝ **վարչակազմի ներկայացուցիչներն իրականացնում են միայն տեսողական հսկողություն**, բացառությամբ Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, ընդ որում, այդ մասին պարտադիր կարգով նախազգուշացվում են դատապարտյալը և տեսազանգի իրավունքից օգտվող անձը:

5. Նախագծով կանոնակարգված չէ այն հարցը, թե հեռախոսակապը, կարճատև կամ երկարատև տեսակցությունը կարող են արդյոք փոխարինվել տեսազանգով: Այս կապակցությամբ գտնում ենք, որ Նախագծով պետք է նախատեսվի այդպիսի հնարավորություն:

Հարկ է նշել, որ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ) Պորտուգալիա կատարած այցելության վերաբերյալ 2013 թվականի զեկույցում անդրադարձ է կատարվել Մոնսատո ազատագրկման վայրում ազատությունից զրկված անձանց մեծ մասի օտարերկրյա քաղաքացիներ լինելու հանգամանքին: Ազատությունից զրկված որոշ անձինք նշել էին, որ ազատագրկման վայրի ղեկավարությունը համաձայնվել էր շաբաթական տեսակցությունները երկարացնել կես ժամով, երբեմն էլ՝ նույնիսկ մեկ ժամով, երբ տեսակցության եկած անձն այցելել է հեռավոր վայրից: ԽԿԿ-ն ողջունել էր այս պրակտիկան և նշել, որ անհրաժեշտ է դրսևորել որոշակի ճկունություն այս հարցում, երբ ընտանիքի անդամները ֆինանսական միջոցների սղության կամ

---

<sup>7</sup>Տե՛ս Commentary to recommendation REC(2006) 2 of the Committee of Ministers to member states on the European Prison Rules, էջ 10: Հասանելի է հետևյալ կայքէջում՝ <http://www.coe.int/t/dghl/standardsetting/prisons/E%20commentary%20to%20the%20EPR.pdf> (25.04.2016 թվականի դրությամբ):

հեռավորության պատճառով չեն կարողանում կանոնավոր այցելել ազատությունից զրկված անձանց:

ԽԿԿ-ն մատնանշել էր, որ տեսակցությունների կուտակումը, հեռախոսազանգերի տևողության երկարացումը կամ նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը («**Voice over Internet Protocol**»-ի կամ «**Skype**»-ի միջոցով) ազատությունից զրկված անձանց հնարավորություն կընձեռնի հաղորդակցվել ընտանիքի հետ<sup>8</sup>:

«Human Rights Watch» կազմակերպությունն իր 1993 թվականի ազատագրված վայրերի մասին համաշխարհային զեկույցում նշել է, որ օրինակ՝ Հարավային Աֆրիկայում ազատությունից զրկված անձանց տեսակցությունները թույլատրվում է փոխարինել 10 րոպե տևողությամբ հեռախոսազանգով: **Կազմակերպությունը խորհուրդ է տվել պետություններին ազատությունից զրկված անձանց հնարավորություն ընձեռնել երկարացնել տեսակցության տևողությունը կարճատև մյուս տեսակցությունների հաշվին, ինչը հնարավորություն կտա հեռավոր վայրից այցելած հարազատներին լիարժեք օգտվել տեսակցությունից**<sup>9</sup>:

6. Նախագծում առկա են օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման հետ կապված մի շարք թերություններ: Այսպես.

6.1. ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի XX-րդ գլխի վերնագիրն է՝ «ՇԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ»: Վերնագրում տեսազանգերի մասին նշում չկա: Առաջարկվող փոփոխությունների ընդունման դեպքում հիշյալ վերնագիրը չի համապատասխանի գլխի բովանդակությանը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի այն պահանջին, ըստ որի՝ (...) բաժինների և գլուխների վերնագրերը պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը:

6.2. Նախագծում նշված «(...) մինչև **քսան** րոպե տևողությամբ (...)» ձևակերպումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի նիստի № 13 արձանագրային որոշման հավելվածի 141-րդ կետի այն պահանջին, որի համաձայն՝ իրավական ակտում մեկից մինչև տասը թվերը ներառյալ՝ գրվում են բառերով, **իսկ տասից բարձր թվերը՝ արաբական թվանշաններով**: Եթե նույն նախադասության մեջ նույն գոյականին են վերաբերում տասից փոքր և տասից մեծ թվեր, ապա բոլոր թվերը գրվում են արաբական թվանշաններով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:

<sup>8</sup>Տե՛ս Report to the Portuguese Government on the visit to Portugal carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 13 to 17 May 2013, կետ 51: Հասանելի է հետևյալ կայքէջում՝ [http://www.cpt.coe.int/documents/prt/2013-35-inf-eng.htm#\\_Toc363550084](http://www.cpt.coe.int/documents/prt/2013-35-inf-eng.htm#_Toc363550084) (25.04.2016 թվականի դրությամբ):

<sup>9</sup>Տե՛ս The Human Rights Watch Global Report On Prisons Global Report On Prisons, June 1, 1993, էջեր 106-107: Հասանելի է հետևյալ կայքէջում՝ <https://www.hrw.org/legacy/reports/pdfs/g/general/general2.936/general2936full.pdf> (25.04.2016 թվականի դրությամբ):

6.3. Նախագծում տեղ են գտել նաև վրիպակներ, օրինակ՝ Նախագծով ամրագրված դրույթներից մեկում գրված է «ներկայացուցիչը» բառը, մինչդեռ պետք է լինի՝ «ներկայացուցիչը»: Մեկ այլ դեպքում «օտարերկրյա» բառից հետո բացակայում է «քաղաքացի» բառը:

Հասկանալի չէ նաև Նախագծում նշված «հաճախականությունը» բառը, այն դեպքում, երբ արդեն իսկ սահմանված է, որ «(...) օտարերկրյա կալանավորված անձանց և դատապարտյալներին ամսվա ընթացքում մեկ անգամ (...) կարող է տրամադրվել տեսազանգի (skype) հնարավորություն»: Կարծում ենք, որ նպատակահարմար կլինի «հաճախականությունը» բառը փոխարինել «օրը, ամսաթիվը, տարեթիվը» բառերով:

Հարգանքով՝



Ա. ԹԱԹՈՅԱՆ